ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/20

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Արքասիմ» ՍՊԸ-ի տնօրեն Վ.Սիմոնյանի (պետական ռեգիստրի գրացման համար՝ 271.110.1063113)

«Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ

Ա. Հայրապետյանի (լիազորագիր՝ տրված 12.04.2021թ.),

քննելով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի 16-րդ թաղամասի ոռոգման նպատակով պոմպակայանի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից 06.04.2021թ. ներկայացված (07.04.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/20 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Արքասիմ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 06.04.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«2021 թվականի մարտի 23-ի որոշմամբ հաստատվել են ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31 ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները:

Համաձայն այդ որոշման ներքոնշյալ աղյուսակում ներկայացված հայտերը գնահատվել են բավարար.

Հ/Հ	**Մասնակցի անվանումը Имя участника:**	**Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր** /համապատասխանելու դեպքում նշել “X”/ **Заявки, соответствующие требованиям приглашения / при необходимости указать «X» /**	**Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր** /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/ **Заявки, не соответствующие требованиям приглашения / В случае несоответствия указать «X» /**	**Անհամապատասխանության համառոտ նկարագրություն Краткое описание несоответствия**
1	«Հայրապետյան եղբայրներ Շին Վեստ» ՍՊԸ ООО "Братья Айрапетян Шин Вест"	X		
2	«ՍՏՐՈՒ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ ООО "СТРУ-ГРУПП"	X		
3	«ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ ООО "АРАКАСИМ"	X		
4	«Շինմաստեր» ՍՊԸ ООО "Шинмастер"	X		
5	«ԱՐ-ԱՐ Շին» ՍՊԸ ООО "АР-АР Шин"	X		
6	«ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ ООО "УНИВЕРСАЛ"	X		
7	«Բիդեք» ՍՊԸ ООО «Бидек»	X		
8	«Էներգացանցշին» ԲԲԸ ОАО «Энергацанцшин»	X		
9	«Ակվահոմ» ՍՊԸ ООО "Аквахом"	X		
10	«Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ ЧП "Карлен Сурен Рустамян"	X		

Որի արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել «Հայրապետյան եղբայրներ Շին Վեստ» ՍՊԸ ООО "Братья Айрапетян Шин Вест" ընկերությունը, մյուս արդյունքները ներկայացնում ենք ներքոհիշյալ աղյուսակում.

Մասնակիցների զբաղեցրած տեղերը Места занятые участниками	**Մասնակցի անվանումը Имя участника:**	**Ընտրված մասնակից/Ընտրված մասնակցի համար նշել** “X”/ Выбранный участник/ отметка “X” для выбранного участника/	**Մասնակցի առաջարկած գին /առանց ԱԱՀ, ՀՀ դրամ/ Цена предложенная участником /без НДС драм РА/***
	«Հայրապետյան եղբայրներ Շին Վեստ» ՍՊԸ ООО "Братья Айрапетян Шин Вест"	X	7050327.1

	«ԱՐՔԱՍԻՄ» ՍՊԸ ООО "АРАКАСИМ"		7576440
	«ՍՏՐՈՒ-ԳՐՈՒՊ» ՍՊԸ ООО "СТРУ-ГРУПП"		8000000
	«Շինմաստեր» ՍՊԸ ООО "Шинмастер"		8155621
	«ԱՐ-ԱՐ Շին» ՍՊԸ ООО "АР-АР Шин"		8329200
	«ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ ООО "УНИВЕРСАЛ"		8750000
	«Բիդեք» ՍՊԸ ООО «Бидек»		9118120
	«Էներգացանցշին» ԲԲԸ ОАО «Энергацанцшин»		9349968
	«Ակվահոմ» ՍՊԸ ООО "Аквахом"		11451888
	«Կառլեն Սուրենի Ռուստամյան» Ա/Ձ ЧП "Карлен Сурен Рустамян"		9575472

Հայտնում եմ Ձեզ, որ Գնահատող հանձնաժողովի կողմից որպես հրավերի պահանջներին համապատասխանող է գնահատվել «Հայրապետյան եղբայրներ Շին Վեստ» ՍՊԸ ООО "Братья Айрапетян Шин Вест" ընկերության ներկայացրած հայտը, որին էլ առաջարկվել է կնքել պայմանագիր:

Գտնում եմ, որ տվյալ ընկերության ներկայացրած հայտը պետք է գնահատվեր հրավերի պահանջներին չհամապատասխանող, քանի որ վերջինիս ներկայացրած հայտում թույլ է տրված սխալ: Տվյալ ընկերության հայտի գնային առաջարկը լրացված է հրավերի պահանջների խախտումներով, այն է գումարները ներկայացված են միայն թվերով, իսկ տառերով գրված չէ /կցվում է/: ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31 ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5.2 կետը սահմանում է այն դեպքերը, որոնց դեպքում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման: Դրանք են՝ << ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով.

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված.

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումարները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը.

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը.

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Փաստորեն հրավերով նախատեսված չէ դեպք, որ մասնակիցը կարող է գնային առաջարկի բոլոր տողերը լրացնել միայն թվերով /մասնակցի ներկայացրած գնային առաջարկը կցվում է/:

Հրավերի 1-ին մասին 8.2 կետով սահմանված է ՝ Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը յոթանասունհինգը չգերազանցելու դեպքում հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տաս, իսկ գերազանցելու դեպքում՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:

Գնումների մասին ՀՀ օրենքի 34 հոդվածի 1-ին կետը սահմանում է՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ակնհայտ է, որ տվյալ դեպքում մասնակիցը հայտը ներկայացրել է ոչ հրավերով սահմանված կարգով, ուստի, ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի 1-ին մասով, և ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասին 5.2 և 8.2 կետերով, մասնակցի հայտը պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ անվավեր ճանաչելու 23.03.2021թ. կայացված «Հայրապետյան եղբայրներ Շին Վեստ» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու վերաբերյալ որոշումը:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 12.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ներկայացել է նիստին և պնդել վերը շարադրված բողոքը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Երևանի քաղաքապետարանի կողմից (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 12.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. «Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊԸ-ի կողմից 12.04.2021թ. ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/20 բողոքի շրջանակներում իրեն որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

«Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊԸ-ն ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը բողոքի քննության նպատակով 12.04.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստին, ով հայտնել է հետևյալը.

«Գտնում ենք, որ ներկայացված բողոքը անհիմն է: Գնման գործընթացի արդյունքում Ընկերության հայտը գնահատվել է բավարար, հրավիրվել է բանակցություններ, որին մասնակցել են «Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊԸ և «Արքասիմ» ՍՊԸ-ն, բանակցությունների ընթացքում «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկություններ և դիտողություններ չեն ներկայացվել: Սահմանվել է անգործության ժամկետ, այնուհետև՝ 2 օր անց զանգահարել են պատվիրատուին պարզելու համար թե ինչու պայմանագրի նախագիծը չի ուղարկվել և տեղեկացել, որ ընթացակարգի շրջանակներում 06.04.2021թ. ներկայացվել է բողոք: Ըստ բողոքաբերի խնդիրը կայանում է նրանում, որ գնային առաջարկը ներկայացվել է թվերով և չի ներկայացվել տառերով, հայտնում եմ, որ օրենքով նման պահանջ սահմանված չէ»:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի 16-րդ թաղամասի ոռոգման նպատակով պոմպակայանի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Արքասիմ» և «Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի հրավերի Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, սահմանվել է հետևյալ տեսքով.

Հավելված 2
«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31» * *ծածկագրով*
բաց մրցույթի հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31»* ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է
մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Երևան քաղաքի 16-րդ թաղամասի ոռոգման նպատակով պոմպակայանի կառուցման աշխատանքներ			

3. «Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, ներկայացվել է հետևյալ տեսքով.

Հավելված 2
«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31» ** ծածկագրով*
բաց մրցույթի հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31»* ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) **/տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Երևան քաղաքի 16-րդ թաղամասի ոռոգման նպատակով պոմպակայանի կառուցման աշխատանքներ	7 050 327.1	1 410 065.4	8 460 392.5

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մասնակիցների, այդ թվում՝ «Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊ ընկերության, կողմից ներկայացված հայտերը բավարար գնահատելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊ ընկերությանը, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, հաղթող (ընտրված) մասնակից ճանաչելու վերաբերյալ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Արքասիմ» ՍՊԸ-ի 06.04.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊԸ-ի դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում է յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ***:

Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են

միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Կարգի 40-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի նախագահը հայտարարում է հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված՝ հիմք ընդունելով տառերով գրվածը:

Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ **<u>եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան</u>**, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.1-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացումը կկատարվի համակարգի միջոցով՝ 2020 թվականի մարտի 10-ը, ժամը 10:00-ին:

Հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովի նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների գինը՝ մեկ թվով

արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված՝ **հիմք ընդունելով տառերով գրվածը:**

Նույն կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ **դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան,** բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի 16-րդ թաղամասի ոռոգման նպատակով պոմպակայանի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31» ծածկագրով բաց մրցույթ, որին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ են ներկայացրել «Արքասիմ» և «Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի հրավերի Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, սահմանվել է հետևյալ տեսքով.

Հավելված 2
«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31» * *ծածկագրով*
բաց մրցույթի հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31»* ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է

մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Երևան քաղաքի 16-րդ թաղամասի ոռոգման նպատակով պոմպակայանի կառուցման աշխատանքներ			

«Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 2-ը՝ գնային առաջարկը, ներկայացվել է հետևյալ տեսքով.

Հավելված 2
«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31» * *ծածկագրով*
բաց մրցույթի հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31»* ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	Երևան քաղաքի 16-րդ թաղամասի ոռոգման նպատակով պոմպակայանի կառուցման աշխատանքներ	7 050 327.1	1 410 065.4	8 460 392.5

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.03.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մասնակիցների, այդ թվում՝ «Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊ ընկերության, կողմից ներկայացված հայտերը բավարար գնահատելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2021թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Հայրապետյան եղբայրներ շին վեստ»

ՍՊ ընկերությանը, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, հաղթող (ընտրված) մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Այսպիսով՝ «Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊ ընկերության կողմից հայտով ներկայացված Հավելված N 2-ի՝ գնային առաջարկի ուսումնասիրության արդյունքում հարկ եմ համարում արձանագրել, որ «Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊ ընկերության ներկայացրած գնային առաջարկը կազմված է սահմանված պահանջների խախտմամբ, այն է՝ գնային առաջարկի արժեքի, ավելացված արժեքի հարկի և ընդհանուր գնի սյունակներում նշված գումարները լրացված են միայն թվերով, հետևաբար անհրաժեշտ եմ համարում ընդգծել, որ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված բացառությունները վերաբերելի չեն վերոնշված դեպքին, ուստի գտնում եմ, որ Ընկերության ներկայացրած հայտը, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից 06.04.2021թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/31» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ անվավեր ճանաչելու 18.03.2021թ. կայացրած որոշումը՝ «Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և որպես հետևանք 23.03.2021թ. որոշումը՝ «Հայրապետյան եղբայրներ շին վեստ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, հաղթող (ընտրված) մասնակից ճանաչելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**